



შეფასებისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :



I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասը միավորում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ 1-6:

Առաջին վեց առաջադրանքի կատարումը նախատեսում է՝ ունկնդրել երաժշտական հատվածները և պատասխանել համապատասխան հարցերին: Յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացվում է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան: Ընտրեք և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք մեկ ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ : Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածն ունկնդրելը տրվում է 10 վայրկյան, առաջադրանքի հարցերը կարդալու համար:

Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:

Առաջադրանք 1:

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (1.1 և 1.2).

1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:

- ա) Սվանեթի
- ბ) Կախեթի
- գ) Գուրիա
- դ) Սամեգրելո

1.2 Ի՞նչ ժանրի երգ է:

- ա) Սիրային
- ბ) Պարային
- գ) Աշխատանքային
- դ) Բուժիչ

Առաջադրանք 2:

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (2.1 և 2.2).

2.1 Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է:

- ա) Սիմֆոնիա
- ბ) Քառյակ
- գ) Սիմֆոնիկ նախերգանք
- դ) Կոնցերտ

2.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

- ա) Օթար Թաքթաքիշվիլի
- ბ) Սուլխան Ցինցաձե
- գ) Ալեքսի Մաճավարիանի
- դ) Անդրիա Բալանչիվաձե

Առաջադրանք 3:

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (3.1 և 3.2).

3.1 Ո՞ր օպերայից է հնչում հատվածը:

- ա) «Տուրանդոտո»
- բ) «Կարմեն»
- գ) »Լոենգրին»
- դ) «Ռիգոլետո»

3.2 Ո՞ր ձայնն է կատարում մենակատարի դերերգը

- ա) Ալտո
- բ) Սոպրանո
- գ) Կոլորատուրային սոպրանո
- դ) Մեցցո-սոպրանո

Առաջադրանք 4:

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (4.1 և 4.2).

4.1 Ի՞նչ ժանրի ստեղծագործագործության հատված է:

- ա) Օպերա
- բ) Բալետ
- գ) Սիմֆոնիա
- դ) Օպերետ

4.2 Ի՞նչ կատարողական

կազմ է կատարում:

- ա) Սիմֆոնիկ նվագախումբ
- բ) Կամերային նվագախումբ
- գ) Փողային նվագախումբ
- դ) Կամերային-գործիքային
անսամբլ

Առաջադրանք 5:

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (5.1 և 5.2).

5.1 Ո՞ր դարաշրջանի երաժշտությունն է հնչում :

- ա) Բարոկկո
- բ) Վերածնունդ
- գ) Միջնադար
- դ) XIX դար

5.2 Ի՞նչ երաժշտական

հյուսվածք է:

- ա) Հետերոֆոնիա
- բ) Պոլիֆոնիա
- գ) Հոմոֆոնիա
- դ) Մոնոդիա

Առաջադրանք 6:

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (6.1 և 6.2).

6.1 Ո՞ր երաժշտական ոճն է:

- ա) Նեոկլասիցիզմ
- ծ) Իմպրեսիոնիզմ
- ց) Կլասիցիզմ
- զ) Էքսպրեսիոնիզմ

6.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:


- ա) Բելա Բարտոկ
- ծ) Առնոլդ Շյոնբերգ
- ց) Իգոր Ստրավինսկի
- զ) Սերգեյ Պրոկոֆև


Առաջադրանք 7:


Հրահանգ: Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:


Լադը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար:

ա) 

բ) 

գ) 

դ) 

Առաջադրանք 8:

Հրանանգ: Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած ռիթմիկ գծագրի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:

Ռիթմիկ գծագիրը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար:

ա) 

б) 

в) 

г) 

Առաջադրանք 9:

Երաժշտական թելադրություն :

Հրահանգ: Լսեք մեղեդին և գրեք նոտային համակարգի վրա: Միղեդին մենաձայնային, ութ տակտանոց և միատոն է: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե : Մեղեդին լսում եք ձայնագրությամբ չորս անգամ, ամեն հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Ձեր կողմից գրված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:

Առաջադրանք 10:

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

Հրահանգ: Առաջադրանքը նախատեսում է երաժշտական ստեղծագործության վերլուծություն ըստ տրված հարցերի, ձայնային և նոտային գրառումների հիման վրա:

Երաժշտական ստեղծագործության գրառումը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան , առաջադրանքի հարցերին ծանոթանալու համար:

(Հարցերը տրված են հաջորդ երկու էջի վրա)

1. Ո՞ր երաժշտական ժանրին է պատկանում ստեղծագործությունը: Հիմնավորեք Ձեր կարծիքը:

2. Որոշեք.

ա) Երաժշտական հատվածի ձևը 1-ից մինչև 16-րդ տակտը ներառյալ,

ծ) Ունկնդրած ամբողջ երաժշտական հատվածի սկզբնական տոնայնությունը,

զ) 13-ից մինչև 16-րդ տակտը ներառյալ տրված կադանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

3. Բնութագրեք ինչպես է զարգանում երաժշտական հատվածի գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք և հակիրճ կերպով նկարագրեք, երաժշտական արտահայտչականության ո՞ր միջոցներն են (ի՞նչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, տեմբր (հնչերանգ), հարմոնիա (ներդաշնակություն), էլևեջ-տոնայնություն, ֆակտուրա և այլն)

առանձնապես կարևոր երաժշտական հատվածի գեղարվեստական բովանդակություն ստեղծելու համար:

4. Ունկնդրած հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք ստեղծագործությունը ստեղծելու դարաշրջանը, ոճը և կոմպոզիտորի ինքնությունը:

5. Քննարկեք երկի պատմամշակութային համատեքստը (հակիրճ նկարագրեք կոմպոզիտորի ստեղծագործությունը և առանձնացրեք այս ժանրի նշանակությունը նրա ստեղծագործություններում, նշեք երկի երաժշտագեղարվեստական համատեքստի յուրահատկությունը):

(Երաժշտական հատվածի նոտային գրառումը տրված է հաջորդ էջերում)

Passionato.

1 2 3 4 5

f *Ped.*

6 7 8 9 10 11 12

f *f*

13 14 15 16

mf *f* *f*

First system of a musical score in G minor. The right hand features a melodic line with eighth-note patterns and slurs. The left hand provides a harmonic accompaniment with chords and single notes. The system concludes with a fermata over the final chord.

Second system of the musical score. The right hand continues with intricate eighth-note passages. The left hand includes dynamic markings such as *sf* (sforzando) and *ff* (fortissimo). The system ends with a fermata.

Third system of the musical score, featuring a complex right-hand texture with many beamed notes and slurs. The left hand continues with a steady accompaniment. The system concludes with a fermata.

Agitato.

The first system of music consists of two staves. The upper staff is in treble clef with a key signature of three flats and a 6/4 time signature. It contains a melodic line with a fermata over the first measure, followed by eighth and sixteenth notes. The lower staff is in bass clef with the same key signature and time signature, featuring a bass line with slurs and dynamic markings. The system is divided into three measures by vertical bar lines. The first measure has a piano (*f*) marking. The second and third measures have piano (*f*) markings. The system concludes with a double bar line and a repeat sign.

f *f* *f*

Ad. * *Ad.* * *Ad.* *

The second system of music continues the piece with two staves. The upper staff is in treble clef with a key signature of three flats and a 6/4 time signature. It contains a melodic line with a fermata over the first measure, followed by eighth and sixteenth notes. The lower staff is in bass clef with the same key signature and time signature, featuring a bass line with slurs and dynamic markings. The system is divided into four measures by vertical bar lines. The first measure has a piano (*f*) marking. The second and third measures have piano (*f*) markings. The fourth measure has a piano (*f*) marking. The system concludes with a double bar line and a repeat sign.

f *f* *f* *f*

Ad. * *Ad.* * *Ad.* * *Ad.* *

Musical score for the first system, consisting of two staves (treble and bass clef). The music is in a key with two flats and a 3/4 time signature. The score includes various musical notations such as slurs, accents, and dynamic markings. Below the staves, there are performance instructions: *rit.*, ** rit.*, ** rit.*, ** rit.*, ** rit.*, and ***.

Musical score for the second system, continuing from the first. It features the same two-staff format. The music includes dynamic markings such as *sf* and *ritard.*, and performance instructions like *ritenuto*, *a tempo*, and *D.S.*. Below the staves, there are performance instructions: *rit.*, ** rit.*, ** rit.*, ** rit.*, ** rit.*, and *D.S.*.

Con affetto.

The first system of the musical score is written for piano in 3/4 time. It features a treble and bass clef. The key signature has two flats (B-flat and E-flat). The music is marked with a forte dynamic (*ff*). The melody in the treble clef consists of eighth and sixteenth notes, often beamed together, with some notes tied across bar lines. The bass clef provides a harmonic accompaniment with similar rhythmic patterns.

Piu presto molto espressivo.

The second system continues the piece, marked with a piano dynamic (*p*). The tempo and expression markings are "Piu presto molto espressivo". The notation includes various articulations such as accents and slurs. The treble clef melody is more active, with frequent slurs and accents. The bass clef accompaniment remains consistent with the first system.

The third system of the score shows further development of the musical themes. It maintains the same key signature and time signature. The treble clef features more complex rhythmic patterns, including sixteenth-note runs and slurs. The bass clef continues to support the melody with a steady accompaniment.

Tempo I.

The image shows a musical score for piano, consisting of two staves. The key signature has two flats (B-flat and E-flat), and the time signature is 2/4. The tempo is marked "Tempo I." at the beginning. The score features various musical notations including notes, rests, and dynamic markings. The first staff begins with a treble clef and a 2/4 time signature. The second staff begins with a bass clef. The music is written in a style typical of 19th-century piano literature. The first staff has a dynamic marking of *ff* (fortissimo) and the second staff has a dynamic marking of *f* (forte). The score concludes with a double bar line.

II մաս

Առաջադրանքներ 11-18:

Հրահանգ: Պատասխանների թերթիկի վրա ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում նշեք X նշանը:

Առաջադրանք 11:

Եվրոպայի ո՞ր քաղաքում է ստեղծվել օպերայի ժանրը:

ա) Փարիզ

ծ) Ֆլորենցիա

ց) Վիեննա

զ) Բարսելոնա

Առաջադրանք 12:

Ո՞ր բնութագրիչը չի համապատասխանում երաժշտական ռոմանտիզմի ոճին:

- ա) Երաժշտության և պոեզիայի գեղարվեստական կերպարների համադրությունը
- ծ) Քնարերգության առավելությունը
- ց) Գործիքային տեմբրի անհատականացումը
- զ) Հերոսական-դրամատիկ սիմֆոնիզմը

Առաջադրանք 13:

Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է Քամիլ Սեն-Սանսի «Կենդանիների շքահանդեսը»:

- ա) Սիմֆոնիա
- ბ) Սյուիտ
- գ) Սիմֆոնիկ նախերգանք
- դ) Կոնցերտ

Առաջադրանք 14:

Ո՞րն է դանդաղ տեմպի նշյալ երաժշտական տերմինը:

ա) Moderato

ծ) Adagio

ց) Allegro

ղ) Presto

Առաջադրանք 15:

Ո՞րն է սիմֆոնիկ ստեղծագործությունը , որտեղ կիրառված է սպիրիչուելսի թեման:

- ա) Գուստավ Մալերի սիմֆոնիա թիվ 1 «Տիտան»
- ծ) Կլոդ Դեբյուսիի սիմֆոնիկ եռապատկերը «Նոկտյուռններ»
- ց) Անտոն Դվորժակի սիմֆոնիա թիվ 5 «Նոր աշխարհից»
- զ) Մորիս Ռավելի սիմֆոնիկ պիեսը «Բուլերո»

Առաջադրանք 16:

Ո՞ր ծրագրային անվանումը չի համապատասխանում Էդվարդ Գրիգի «Պեր Գյունտ» սիմֆոնիկ սյուիտին:

ա) «Անիտրայի պարը»

ծ) «Լեռնային արքայի քարանձավը»

ց) «Սիրեններ»

զ) «Առավոտ»

Առաջադրանք 17:

Ո՞ր վաստակը չի պատկանում բարերար Դավիթ Սարաջիշվիլիին:

- ա) Վրաց սկսնակ կոմպոզիտորների և կատարողների ուսման ֆինանսավորումը
- ծ) Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի հիմնադրումը
- ճ) Տաղանդավոր երաժիշտներ բացահայտելու նպատակով կոմիտե ստեղծելը
- Պ) Մասնակցությունը Թբիլիսիի երաժշտական ուսումնարանի հիմնադրման գործում

Առաջադրանք 18:

Ի՞նչ է օրատորիա:

- ա) Վոկալ- գործիքային ստեղծագործություն լիբրետոյով, բեմական զգեստներով և դրամատիկ բեմադրությամբ
- ծ) Շարականների շարք մեներգիչ վոկալիստների, խմբի և նվագախմբի համար
- ց) Ընդարձակ վոկալ-գործիքային ստեղծագործություն, որտեղ արտահայտված են Քրիստոսի չարչարանքները
- Պ) Հոգևոր և աշխարհիկ պատմությունն արտացոլող վոկալ-գործիքային ստեղծագործություն, առանց դրամատիկական բեմականացման

Առաջադրանքներ 19- 22:

Կազմություն նոտայից

Հրահանգ: Կազմեք լա նոտայից տրված ինտերվալը, եռահնչյուն և քառահնչյուն ակորդները, լադը և գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:

19. Փոքր տերցիա

20. Մաժորի կվարտ-սեքստակորդ

21. Փոքր մաժորի սեպտակորդ

22. Մեղեդային մինոր

Առաջադրանքներ 23-25:

Համապատասխանության որոշում

Հրահանգ: Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ : Որոշեք համապատասխանությունը դրանց միջև : Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (ճ, ծ, ը) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (1, 2, 3, 4, 5): Յուրաքանչյուր համապատասխանությունը նշեք X նշանով:

Առաջադրանք 23:

Որոշեք համապատասխանությունը իտալական տերմինաբանության և վրացական թարգմանության միջև.

ա) Agitato

ծ) Cantabile

զ) Maestoso

1) Նուրբ

2) Թեթև

3) Ալեկոծ

4) Երգեցիկ

5) Վեհասքանչ

Առաջադրանք 24:

Որոշեք համապատասխանությունը վրացական ժողովրդական երգերի և Վրաստանի տարածաշրջանների միջև.

ա) «Լիլե»

ծ) «Խասանբեգուրա»

զ) «Չակրուլո»

1) Գուրիա

2) Սամեգրելո

3) Սվանեթի

4) Կախեթի

5) Իմերեթի

Առաջադրանք 25:

Որոշեք համապատասխանությունը երաժշտական ոճերի և կոմպոզիտորների միջև:

ա) Իմպրեսիոնիզմ

ծ) Կլասիցիզմ

ց) Ռոմանտիզմ

1) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

2) Ֆրիդերիկ Շոպեն

3) Յանիս Բսենակիս

4) Կլոդ Դեբյուսի

5) Յոհան Սեբաստիան Բախ

Առաջադրանքներ 26-28:

«Ճշմարիտ է-Միսալ է»

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ , եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:

Միսալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ այդ տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

Հաշվի առեք, որ ընդունվում է այն պատասխանը, ուր տրված բացատրության դրական ձևը փոխված է բացասականի և ընդհակառակը:

Առաջադրանք 26:

Վրացական ժողովրդական երգ «նադուրին» խնջույքային ժանրի երգ է:

Առաջադրանք 27:

Ունիսոնը միևնույն բարձրության երաժշտական հնչյունի, երկու կամ ավելի ձայնի կամ երաժշտական գործիքի միաժամանակյա հնչակցումն է:

Առաջադրանք 28:

«Ձիսպիրի» («Սկսվածք») կոչվում է կանոնի յուրաքանչյուր շարականի առաջին տունը, որը մյուս տների ռիթմային-մեղեդիական մոդելն է:

Առաջադրանքներ 29 -30:

Ժամանակագրության որոշում

Հրահանգ: Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույն դասավորեք թվարկացանկը: Պատասխանները թվանշաններով 1-ից մինչև 4-ը գրանցեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում այբուբենի տառերի տակ :

Առաջադրանք 29:

Ժամանակագրական առումով դասավորեք երաժշտական ուղղությունները.

ա) Բարոկկո

ծ) Իմպրեսիոնիզմ

ճ) Կլասիցիզմ

դ) Ռոմանտիզմ

Առաջադրանք 30:

Ժամանակագրական առումով դասավորեք վրաց դաշնակահարներին, ըստ նրանց կյանքի ու գործունեության.

ա) Ալեքսանդր Կորսանտիա

ծ) Էլիստ Վիրսալաձե

ճ) Ալոիզ Միզանդարի

զ) Լեքսո Թորաձե